Կոնֆլիկտների ճնշումը
Կոնֆլիկտները լուծելու ծրագիր

Ներածություն

Միացյալ Նահանգներում կան ավելի շատ իրավաբաններ մեկ շնչի հաշվով, քան աշխարհի ցանկացած այլ երկրում: Ըստ 2005 թվականի տվյալների՝ Միացյալ Նահանգներում կար 799.960 լիցենզավորված իրավաբան, այսինքն՝ մեկ իրավաբան ամեն 320 մարդու համար: Ակնհայտ է, որ բոլոր այս իրավաբանները պետք է աշխատանք ունենային: (As of April 2011, there were 1,225,452 licensed attorneys in the United States). Որպես արդյունք՝ Միացյալ Նահանգները նույնպես առաջատարն է դատական հայցերով: Բոլորս գիտենք Ստելլա Լիբեքի պատմությունը, ով դատական հայց ներկայացրեց ընդդեմ «ՄակԴոնալդս»-ի **1992 թվականին**, որովհետև թափել էր սուրճն իր գոգին: **Ստելլան ստացավ 2,9 միլիոն** դոլար՝ որպես փոխհատուցում կրած վնասի համար Նյու Մեքսիկոյի դատարանի կողմից, և այդ դեպքից հետո «ՄակԴոնալդս»-ը հարկադրված էր զգուշացնել մարդկանց այն մասին, որ նրանց գնած սուրճը տաք է:

Ես չասացի սա՝ իրավաբաններին վարկաբեկելու համար: Այնուամենայնիվ, մենք պետք է հարց տանք. կամ արդյոք կոնֆլիկտները լուծելու ավելի արդյունավետ միջոց, քան մարդուն դատարան քարշ տալը: Որպես Քրիստոսի հետևորդներ՝ ինչպե՞ս ենք մենք արձագանքում Քրիստոսում մեր եղբայրներին և քույրերին, երբ նրանք սխալ են վարվում մեզ հետ:

Ուսումնասիրելով Հակոբոսի թուղթը՝ մենք տեսանք, որ մեր միջի կռիվների և պայքարների աղբյուրը այն ցանկություններն են, որոնք պատերազմում են մեր ներսում (Հակոբոս 4:1): Հուսով եմ՝ դուք մասնակցում եք մեր Աստվածաշնչյան դասընթացներին, քանի որ դուք պետք է հասկանաք, թե ինչպե՞ս հեռացնել արտաքին ախտանշանների ներքին պատճառները: Բայց այսօրվա ուղերձում մենք անդրադառնալու ենք հենց արտաքին ախտանշաններին: Ի՞նչ մենք կարող ենք սովորել Հիսուսից կոնֆլիկտները լուծելու վերաբերյալ, հատկապես երբ խոսքը հավատացյալների մասին է: Մենք օգտագործելու ենք երկու հատված Հիսուսի ուսուցումներից: Ես ցանկանում եմ կարդալ երկուսն էլ, և հետո մենք որոշ դիտարկումներ կանենք կոնֆլիկտների լուծման մասին դրանց հիման վրա: Այնպես որ, խնդրում եմ, բացեք Մատթեոս 5:23-25-ը, պահեք այս տեղը, իսկ հետո բացեք Մատթեոս 18:15-ը:

Հոբ 16:19 - Հէնց հիմա էլ ահա երկնքումն է իմ վկան, և իմ փաստաբանը բարձրերումն է:

Եփ. 6:12 - Որովհետև մեր <u>պատերազմը</u> արիւնի և մարմնի հետ չէ, այլ իշխանութիւնների և պետութիւնների հետ, այս աշխարհի խաւարի աշխարհակալների հետ, այն չար հոգիների հետ որ երկնաւորների մէջ են:

Հակ. 4:1 - Ո՞րտեղից են պատերազմունքներ և կռիւներ ձեր միջումը. Չէ՞որ այստեղից է, այսինքն ցանկութիւններից որ պատերազմում են ձեր անդամներում:

Մատ. 5:23-24 - Արդ՝ եթէ սեղանի վերայ մատուցանես քո ընծան, և այնտեղ յիշես, թէ քո եղբայրը քեզ դէմ մէկ բան ունի, 24 Թո՛ղ այնտեղ քո ընծան սեղանի առաջին. և գնա առաջ հաշտուիր քո եղբօր հետ. և յետոյ եկ ընծադ մատուցրու:

Մատ. 18:15-20 - Եթէ քո եղբայրը քեզ դէմ մեղանչէ, գնա նորան յանդիմանիր՝ երբոր դու և նա մինակ լինիք. եթէ քեզ լսէ, քո եղբայրը շահեցիր: 16 Բայց եթէ չլսէ, վեր առ մի կամ երկու ուրիշն էլ քեզ հետ, որովհետև երկու կամ երեք վկայի բերանով ամեն բան կհաստատուի: 17 Բայց եթէ նորանց էլ չլսէ, ասիր եկեղեցուն. ապա եթէ եկեղեցուն էլ չլսէ, թող լինի քեզ համար ինչպէս հեթանոս և մաքսաւոր:
18 Ճշմարիտ ասում եմ ձեզ, ինչ որ երկրի վերայ կապէք, երկնքումն էլ կապուած կլինի, և ինչ որ երկրի վերայ արձակէք, երկնքումն էլ արձակուած կլինի: 19 Դարձեալ ասում եմ ձեզ՝ եթէ ձեզանից երկուսը երկրի վերայ միաբանուին՝ ամեն ինչ բանի համար որ խնդրեն, կլինի նորանց իմ Հօրիցն՝ որ երկնքումն է: 20 Որովհետև ուր որ երկու կամ երեք հոգի իմ անունովը ժողովուած լինին՝ ես այնտեղ նորանց մէջ եմ:

Հիսուսի խորհուրդները կոնֆլիկտներ լուծելու վերաբերյալ, որոնք գրված են այս հատվածներում, կարելի է ընդհանրացնել չորս պարզ սկզբունքներով, որոնք, համոզված եմ, կօգնեն լուծել ձեր կյանքում առկա կոնֆլիկտների 99%-ը: Դրանք այնքա՜ն հակիրճ և պարզ են, որ մենք կարող ենք բարձրաձայն ասել դրանք: Պատրա՞ստ եք: Կրկնեք ինձ հետ.

1. Անհապաղ գործեք - Quickly
2. Դեմ առ դեմ խոսեք - Face to Face
3. Միայն իրար միջև - One on one
4. Օգնություն ստացեք - Get help

I. ԱՆՀԱՊԱՂ ԳՈՐԾԵՔ - QUICKLY (ՄԱՏԹԵՈՍ 5:23-25)

Մատ. 5:23-24 - Արդ՝ եթէ սեղանի վերայ մատուցանես քո ընծան, և այնտեղ յիշես, <u>թէ քո եղբայրը քեզ դէմ մէկ բան ունի</u>, Թո՛ղ այնտեղ քո ընծան սեղանի առաջին. և գնա առաջ հաշտուիր քո եղբօր հետ. և յետոյ եկ ընծադ մատուցրու:

Հիսուսը զգուշացրեց Լեռան քարոզի մեջ, որ Աստծո համար եղբոր կամ քրոջ դեմ բարկացած հավատացյալը նույնքան մեղավոր է, որքան մարդասպանը: Եթե Աստված այդպես է դիտարկում ձեր բարկությունը, մի՞թե կարևոր չէ արագորեն ազատվել դրանից: Ես գիտեմ, որ շատերի համար սա բարդ է: Երբ ինչ-որ մեկը սխալ է վարվել ձեր հանդեպ, դուք բարկացած լինելու իրավունք ունեք, այնպես չէ՞: Այստեղ կան մարդիկ, ովքեր այնքա՜ն ժամանակ են բարկություն և վրդովմունք կրում, որ բառացիորեն չգիտեն, թե ինչպիսի՛ն նրանք կլինեին կամ ինչի՛ մասին կխոսեին, եթե չլիներ այդ վիրավորանքը, որը որոշում է նրանց կյանքի ընթացքը: Ես նույնպես գիտակցում եմ, որ այստեղ կան մարդիկ, ովքեր շատ ցավոտ անցյալ են ունեցել: Ես չեմ ցանկանում փոքրացնել այն ցավը, որը դուք վերապրել եք: Այն, ինչ Հիսուսը պահանջում է այս խոսքում, հեշտ չէ, և միգուցե դուք մասնագիտական օգնության կարիք ունենաք՝ այս պահանջը կատարելու համար: Այնուամենայնիվ, Հիսուսը պարզ է խոսում. <u>կոնֆլիկտը պետք է արագորեն լուծել:</u>

Խոսքեր 23-24-ում Նա ակնարկում է, որ կոնֆլիկտը լուծելը նույնիսկ ավելի կարևոր է, քան երկրպագությունը, այն աստիճան, որ եթե դուք ներկա եք եկեղեցական հավաքույթին և հիշում եք, որ ձեր եղբայրն ինչ-որ բան ունի ձեր դեմ, դուք պետք է հեռանաք այդտեղից, հաշտվեք ձեր եղբոր հետ, և նոր վերադառնաք երկրպագությանը: Կարո՞ղ է այնպես լինել, որ Աստված նույնիսկ չընդունի մեր երկրպագությունը, քանի դեռ մենք չհաշտվենք մեր եղբայրների և քույրերի հետ: Ահա թե ինչ է այս հատվածը ցույց տալիս մեզ: Այլ հատվածներ, օրինակ՝ Ա Հովհաննես 4:20-ը, հաստատում են սա.

> **«Եթե մեկն ասի, թե Սիրում եմ Աստծուն, և իր եղբորն ատի, նա ստախոս է, որովհետև նա, որ իր տեսած եղբորը չի սիրում, Աստծուն, որ չի տեսել, ինչպե՞ս կարող է սիրել»:**

Այնպես որ, երբ դուք որևէ խնդիր ունեք մեկ այլ հավատացյալի հետ, անհապաղ հարթեք այն: Իսկ որքա՞ն շտապ դա պետք է արվի: Եփեսացիների 4:26-ում գրված է.

> **«Թող արեգակը ձեր բարկության վրա չմտնի»:**

II. ԴԵՄ ԱՌ ԴԵՄ ԽՈՍԵՔ - FACE TO FACE (ՄԱՏԹԵՈՍ 18:15)

Եթէ քո եղբայրը քեզ դէմ մեղանչէ, **<u>գնա նորան յանդիմանիր՝</u>** երբոր դու և նա մինակ լինիք. եթէ քեզ լսէ, քո եղբայրը շահեցիր:

Ուշադրություն դարձրեք, որ այստեղ գրված չէ՝ «սոցիալական ցանցերի միջոցով»: Դեմ առ դեմ շփումն ամեն օր ավելի դժվար է դառնում: Մեր հասարակությունն ավելի ու ավելի է հեռանում դեմ առ դեմ շփվելուց: Մի ժամանակ դա միակ տարբերակն էր: Հետո արվեց ձեռագրի գյուտը, և մարդիկ կարողացան նամակներ գրել իրար: Դրանից հետո հորինվեց հեռախոսը: Հաջորդն էլեկտրոնային փոստն էր, իսկ հետո՝ տեքստային հաղորդագրությունները: Այսօր, եթե դուք բարկացած եք ինչ-որ մեկի վրա, դուք կարող եք պարզապես գրառում կատարել Թվիթերում (Twitter), և ողջ աշխարհը կիմանա այդ մասին: Բայց սա այն միջոցը չէ, որի մասին սովորեցնում էր Հիսուսը: Դեմ առ դեմ հանդիպումն արժեք ունի: Շատ դժվար է փոխանցել զգացմունքները էլեկտրոնային նամակի կամ տեքստային հաղորդագրության միջոցով, և մարդը հեշտորեն կարող է սխալ հասկանալ մեր գրածը: Բացի այդ՝ թեև դուք կարող եք թեթևություն ապրել բարկացած վիճակում էլեկետրոնային նամակներ գրելով, դա ոչ մի օգուտ չի բերի մյուս կողմին:

III. ՄԻԱՅՆ ԻՐԱՐ ՄԻՋև - ONE ON ONE (ՄԱՏԹԵՈՍ 18:15)

Ուշադրություն դարձրեք Մատթեոս 18:15-ի երկրորդ մասին. «...**երբ որ դու և նա մենակ լինեք»** (կամ՝ «...միայն ձեր երկուսի միջև»):

Իմաստություն խնդրեք, որպեսզի կարողանաք տեսնել կոնֆլիկտի այն կողմերը, որոնցում կա ձեր մեղավորությունը, և աշխատեք դրանց վրա, մինչև մյուս կողմի հետ խոսելը: Ես ճանաչում եմ մի ամուսնական խորհրդատուի, ով մշտապես կիրառում էր մի օրենք, որն անվանում էր **«<u>տաս տոկոսի օրենքը</u>»**, երբ խորհրդատվություն էր անցկացնում զույգերի հետ: Նա փորձում էր համոզել ամուսիններից յուրաքանչյուրին պատասխանատվություն ստանձնել խնդրի 10 տոկոսի համար: Ողջամիտ մարդկանց մեծ մասը չի հրաժարվի 10-տոկոսանոց պատասխանատվություն ստանձնել, այնպես չէ՞: Այս խորհրդատուն հանձնարարում էր ամեն մեկին որոշել իրենց տաս տոկոսը մինչև հաջորդ հանդիպումը:

Նրա մեթոդի տրամաբանությունն այն էր, որ հաջորդ անգամ, երբ նրանք հանդիպում էին, խնդիրը 20 տոկոսով լուծված էր լինում:

IV. ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑԵՔ - GET HELP (ՄԱՏԹԵՈՍ 18:16-17)

16 Բայց եթէ չլսէ, վեր առ մի կամ երկու ուրիշն էլ քեզ հետ, որովհետև երկու կամ
երեք վկայի բերանով ամեն բան կհաստատուի: 17 Բայց եթէ նորանց էլ չլսէ, ասիր
եկեղեցուն. ապա եթէ եկեղեցուն էլ չլսէ, թող լինի քեզ համար ինչպէս հեթանոս և
մաքսաւոր:

Այստեղ Հիսուսն աստվածաշնչյան հաջորդականության համակարգ է հիմնում: Ի՞նչ է տեղի ունենում, երբ դուք և այն մարդը, ում հետ դուք կոնֆլիկտ ունեք, չեք կարողանում լուծել այն: Դուք դիմում եք եկեղեցուն: Նախ դուք դիմում եք մեկ կամ երկու վստահելի (և միացյալ) ընկերների, ովքեր կարող են օգնել ձեզ վերլուծել այդ կոնֆլիկտը:

Եթե այն դեռ չի լուծվում, դուք կարող եք անցնել «հաջորդ փուլերի»: «His House» ծառայությունն ունի համակարգ, որը կարող է օգնել իր համայնքի անդամներին կոնֆլիկտներ լուծել:

Ամփոփում

Ես համոզված եմ, որ մեր համայնքում կան կոնֆլիկտներ, որոնք կարող էին լուծվել, եթե մենք պարզապես ցանկանայինք անել այս քայլերը: Եկեք միասին վերհիշենք դրանք:

1) Անհապաղ գործեք - Quickly,
2) Դեմ առ դեմ խոսեք - Face to Face,
3) Միայն իրար միջև - One on one,
4) Օգնություն ստացեք - Get help

Ես ցանկանում եմ, որ խորանի կանչի ընթացքում դուք մտածեք այն փոխհարաբերությունների մասին ձեր կյանքում, որոնցում խնդիրներ կան: Հիշեք, որ Հիսուսն առաջնահերթություն է համարում կոնֆլիկտների լուծումը: Հնարավոր է, որ ձեր կոնֆլիկտի լուծումը շատ ավելի կարևոր է, քան հաջորդ շաբաթ եկեղեցական հավաքույթին հաճախելը: Այնպես որ, , որ եթե հաջորդ շաբաթ դուք այստեղ չլինեք, ես կենթադրեմ որ դուք գնացել եք ինչ-որ կոնֆլիկտ լուծելու: Իսկ եթե չկարողանաք լուծել այն, օգնությո՛ ւն ստացեք: